ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի*
*Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,*
*հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru*

## *ՈՐՈՇՈՒՄ*

*« 24 » դեկտեմբերի 2012թվականի N 16 - Ն*

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով՝*

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի 2012 թվականի վարչական և ֆոնդային բյուջեներում կատարել հետևյալ փոփոխությունները.*

*1.Վարչական բյուջեի եկամուտները ավելացնել 174200/մեկ հարյուր յոթանասուն չորս հազար երկու հարյուր/ դրամ սուբվենցիան, այն ուղղելով ծախսային մասի 9.5.1 /Արտադպրոցական դաստիարակություն/ ծրագրի 4511/սուբսիդիա ոչ ֆինանսական պետական/համայնքային/ կազմակերպություններին/ հոդվածին:*

*2. Ֆոնդային բյուջեի եկամուտները ավելացնել ի հաշիվ հողի օտարումից մուտքերի՝ 727605/յոթ հարյուր քսան յոթ հազար վեց հարյուր հինգ/ դրամ, գույքի օտարումից մուտքերի՝ 390460 /երեք հարյուր իննսուն հազար չորս հարյուր վաթսուն/ դրամ, դրանք ուղղելով ֆոնդային բյուջեի ծախսային մասի 4.3.2 (Նավթամթերք և բնական գազ)ծրագրի 5112/շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածին 1118065/մեկ միլիոն հարյուր տասնութ հազար վաթսուն հինգ/դրամ:*

*Կողմ /11/* *Դեմ/0/* *Ձեռնպահ/0/*

*ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ*
*ԵՐՎԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ*
*ԱՇՈՏ ԱՐԾԱԿՅԱՆ*
*ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ*
*ՄԻՍԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ*
*ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*
*ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ*
*ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ*
*ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ*
*ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*ԳՈՌ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄ...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,
հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

« 24 » դեկտեմբերի 2012թվականի N 17 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2013թվականին սահմանել 210000 հազար դրամ:

2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված վարձատրության չափը ընդունել հիմք՝ Նոր Խարբերդ համայնքի 2013 թվականի բյուջեն կազմելիս:

Կողմ /11/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ
ԵՐՎԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՍԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ
ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՌՌ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱ...

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի*
*Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,*
*հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru*


## ՈՐՈՇՈՒՄ

*« 24 » դեկտեմբերի 2012թվականի N 18- Ն*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջով՝*

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

*Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդի գյուղապետարանի աշխատակազմի , համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը , հաստիքային ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն ցանկի:*

*Կողմ /11/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/*

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ
ԵՐՎԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՍԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ
ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՈՌ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ [illegible]

Հաստատված է

ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 24 - ի թիվ 18-Ն որոշմամբ

# ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդի գյուղապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի

## ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

| Հ/Հ | Կառուցվածքը | Աշխատակիցների թվաքանակը | Հաստիքացուցակը | Պաշտոնային դրույքաչափերը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | Հայեցողական պաշտոն | 3 | 1.Համայնքի ղեկավարի տեղակալ<br>2. Համայնքի ղեկավարի օգնական<br>3. Համայնքի ղեկավարի խորհրդական | 150000<br>97000<br>86000 |
| | | | | |
| | Համայնքային ծառայության պաշտոն | 10 | | |
| 1 | Համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խումբ | 1 | | |
| 1.1 | Համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախումբ | 1 | Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար | 168000 |
| 2 | Համայնքային ծառայության պաշտոնների առաջատար խումբ | 2 | | |
| 2.1 | Համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 3-րդ ենթախումբ | 2 | 1. Գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսների գծով գլխավոր մասնագետ-գլխավոր հաշվապահ<br>2. Գյուղապետարանի աշխատակազմի եկամուտների գծով գլխավոր մասնագետ | 145000<br>145000 |
| 3 | Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խումբ | 7 | | |
| 3.1 | Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 1-ին ենթախումբ | 3 | 1. Գյուղապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման գծով առաջատար մասնագետ<br>2. Գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսների գծով առաջատար մասնագետ- հաշվետար- գանձապահ<br>3. Գյուղապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության, բնության և շրջակա միջավայրի պահպանության գծով առաջատար մասնագետ | 97000<br>97000<br>97000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3.2 | Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 2-րդ ենթախումբ | 2 | 1. Գյուղապետարանի աշխատակազմի կրթության , մշակույթի , երիտասարդության հետ տարվող աշխատանքների գծով 1-ին կարգի մասնագետ<br>2. Գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ-համակարգչային օպերատոր | 91000<br>91000 |
| 3.3 | Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 3-րդ ենթախումբ | 2 | 1. Գյուղապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բարեկարգման գծով 2-րդ կարգի մասնագետ | 91000 |
| | | | 2. Գյուղապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ - համակարգչային օպերատոր | 86000 |
| 4. | Տեխնիկական սպասարկման անձնակազմ | 5 | 1.Գյուղապետարանի աշխատակազմի գործավար<br>2. Գյուղապետարանի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենայի վարորդ<br>3. Գյուղապետարանի վարչական շենքի գիշերապահ<br>4. Գյուղապետարանի վարչական շենքի հավաքարար<br>5. Հարկահավաք | 91000<br>51000<br>51000<br><br>74000 |

## ԳՐԱԴԱՐԱՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Գրադարանի տնօրեն | 1 | | 63000 |
| 2. | Գրադարանավար | 2 | | 51000 |

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Մշակույի տան տնօրեն | 1 | | 91000 |
| 2. | Գեղարվեստական մասի ղեկավար | 1 | | 74000 |
| 3. | Հրահանգիչ | 1 | | 57000 |
| 4. | Կազմակերպիչ | 1 | | 51000 |
| 5. | Գործավար | 1 | | 51000 |
| 6. | Պահակ | 1 | | 51000 |
| 7. | Հավաքարար | 1 | | 51000 |
| 8. | Բանվոր | 1 | | 51000 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի*
*Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,*
*հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru*

## *ՈՐՈՇՈՒՄ*

*« 24 » դեկտեմբերի 2012թվականի N 19 - Ն*

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջով՝*

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

*1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2013 թվականին սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.*
*Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել՝*

***հիմնական օբյեկտների համար՝***

*ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.*

*բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝*

*բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.*

*բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.*

*բգ/ 1001 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ.*

***ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝***

*գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.*

*դ/ 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:*

1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար 0.5 գործակցի կիրառմամբ, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառել նաև նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա կիրառել նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը:

1.3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել 2500 դրամ:

1.4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

ա/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

1.5. Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար սահմանել 350 դրամ.

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ

հիդրուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 դրամ,

գ/ խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ:

1.6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները/սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000դրամ,

գ/ բաղնիքների /սաունաների/ համար՝200 000 դրամ,

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ,

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ,

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

1.7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ/այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ,

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

1.8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար տեղական տուրք սահմանել 1000 դրամ:

1.9Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2013 թվականին սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

2.1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

2.2. Համայնքի սեփականության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

2.3. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:

2.4. Գյուղապետարանի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական աղբահանության վճար սահմանել 100 դրամ:

2.5.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար գյուղապետարանի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել.
ա/ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 դրամ,
բ/ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3000 դրամ:

Կողմ /11/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ
ԵՐՎԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՍԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ
ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՈՌ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible] ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,
հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

« 24 » դեկտեմբերի 2012թվականի N 20 – Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Նոր Խարբերդ համայնքի գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, բնակավայրերի նշանակության հողերը աճուրդ- վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն աղյուսակի:

Կողմ /11/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ
ԵՐՎԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՍԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ
ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՈՌ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱ[illegible]

Առդասակ

Նոր Խարբերդ համայնքի ավագանու «24» դեկտեմբերի 2012թվականի N 20-Ն որոշման

Գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների բնակավայրերի նշանակության հողերի աճուրդ - վաճառք

| Լո տ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեն սը /հա/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական Նշանակությունը | Մեկնարկային գինը /դրամ/ | Սահմանափա կումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Նոր Խարբերդ համայնք | գ. Նոր Խարբերդ | 03-070-0116-0049 | 0.24 | գյուղատնտեսական | այլ հողատեսքեր | - | 16200 | չկա |
| 2. | Նոր Խարբերդ համայնք | գ. Նոր Խարբերդ | 03-070-0132-0019 | 0.175 | գյուղատնտեսական | այլ հողատեսքեր | - | 11813 | չկա |
| 3. | Նոր Խարբերդ համայնք | գ. Նոր Խարբերդ | 03-070-0202-0017 | 0.655 | գյուղատնտեսական | 5-րդ կարգի վարելահող | - | 239367 | չկա |
| 4. | Նոր Խարբեր համայնք դ | գ. Նոր Խարբերդ | 03-070-0202-0025 | 0.6821 | գյուղատնտեսական | արոտ | - | 46042 | չկա |
| 5. | Նոր Խարբերդ համայնք | գ. Նոր Խարբերդ | 03-070-0249-0016 | 0.1066 | գյուղատնտեսական | արոտ | - | 11475 | չկա |
| 6. | Նոր Խարբերդ համայնք | գ. Նոր Խարբերդ | 03-070-0108-0026 | 0.0097 | արդյունաբերության,ընդե րքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի | - | գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ | 78570 | չկա |
| 7. | Նոր Խարբերդ համայնք | գ. Նոր Խարբերդ | 03-070-0019-0038 | 0.09347 | բնակավայրերի | - | այլ հողեր | 756945 | չկա |

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԱԳԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ